Ռիթմ, Շեշտ եւ Ամանակ, Սղում եւ Երկարում, Ոտքերի տեսակները, Շեշտական ոտանաւորներ եւ այլն: Սրանցից ամէն մէկն էլ իր ստորաբաժանումը ունի:

Երկրորդ հատուածը կրում է *Հայերէն ոտանաւորների տեսակները* վերնագիրը – եամբական ոտանաւոր, անապեստ, եամբ – անապեստ, համաշեշտ ոտանաւորներ, աշուղական չափեր, ազատ ոտանաւորներ եւ այլն, ամէն մէկը՝ իր ստորաբաժանումներով:

Երրորդ հատուածն է՝ *Հանգիտութիւն, յանգ եւ տուն*: Հանգիտութիւն բառով՝ հեղինակը տալիս է alliteration-ի գաղափարը, մինչդեռ հանգիտութիւն ասելով սովորաբար հասկանում ենք *անալոգիան*. alliteration-ը աւելի յարմար է նմանահնչութիւն, նմանաձայնութիւն եւ կամ նմանայանգ բարգմանել՝ նայած տեղին:

Իր գրքի վերջին հատուածում ուսումնասիրողը պարզում է «*Հանգիտութեան*» էութիւնը, յետոյ առանձին – առանձին քննում է բաղաձայների եւ ձայնաւորների ռիթմական հանգիտութիւնը: Վերջում հետազօտում է յանգի ծագման եւ զարգացման, նրա տեսակներին եւ հնչիւններին վերաբերեալ խնդիրները, եւ այլն:

Կարծում ենք այսչափով գէթ մօտաւոր գաղափար տուինք «Հայոց լեզուի տաղաչափութիւն» գրուածքի մասին, մեծարժէք մի գործ՝ արժանի՝ ամենայն շնորհակալութեան: Ցանկալի է որ մեր գրագէտները լայնօրէն օգտուին նրանից: Բաղձալի է նաեւ, որ հեղինակի պատրաստի միւս աշխատութիւններն եւս, դրանց թւում եւ հայ – ժողովրդական դիւցազներգութեան (Սասմայ Ծռեր) ամբողջական (մի քանի տասնեակ փոփոխակներով) խմբագրութիւնը, լոյս աշխարհ տեսնելու համար այլեւս երկար ժամանակ հերթի չսպասեն:

Բերլին Ա. Ա.

ԸՆԹԵՐՑՈՂԻ ԷՋ

«Վէմ»-ի գրեթէ իւրաքանչիւր համարի առթիւ խմբագրութիւնը կամ աշխատակիցները նամակներ են ստանում ընթերցողներից, որոնք կարծիք են յայտնում իրենց հետաքրքրող նիւթերի մասին: «ԸՆԹԵՐՑՈՂԻ ԷՋ» բաժինը բաց ենք անում, որպէսզի այդ նամակներից ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող մասերը քաղուածաբար ներկայացնենք հանրութեան: Կարճ եւ ամփոփ գրութիւններով ընթերցողները հնարաւորութիւն կունենան արտայայտել այս բաժնում:

ԽՄԲ.

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԱՀԸ

Մեր աշխատակից Ե. Զաւարեանը իր «Սայեաթ Նովա» աշխատութեան վերջին մասի առթիւ վիէննական դիտնական Հ. Ն. Ակինեանից ստացել է մի նամակ, որից քաղում ենք հետեւեալ մասը:

. ԽՄԲ.

Յարգելի բարեկամ,

Կարդացի «Վէմ»-ի վերջին թիւն մէջ Ձեր խիստ հետաքրքրական յօդուածը Սայեաթ Նովայի վերջին օրերու եւ մահուան մասին:

Բոլորովին համամիտ եմ Ձեր տեսութեան ի մասին մահուան թւականին: Կաւելցնեմ յիշողութենէս հետեւեալ ապացոյցն ալ:

1925ին, երբ կուսումնասիրէի Երեւանի Պետ. Թանգարանի հայերէն ձեռագիրները, ուշադրութիւնս գրաւեց ժողովածոյ ձեռագիր մը, ծէ դարու վերջերէն, որ կըպարունակէր այլ եւ այլ թղթեր, ի միջի այլոց Թիֆլիսի հայ կուսաններու նամակները, ուղղուած Լազարեվին ի Մոսկուա: Այստեղ մանրամասն կը նկարագրէին Աղա-Մահմատխանի յարձակումն Տփղիսի վրա եւ կոտորածները, ականատեսի գրչով: Զափազանց հետաքրքրական էին անոնք: Ցուսով թէ պիտի յաջողէի գտնել հոն որեւէ ակնարկութիւն Սայեաթ-Նովայի նահատակութեան մասին, կարդացի նամակները ուշադրութեամբ. բայց չգտայ եւ ոչինչ: Անշուշտ կուսանները պիտի յիշատակէին Վարդապետի մը նահատակութիւնը, եթէ տեղի ունեցած ըլլար··:

Վիէննա Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՄԻ՞ԹԷ ՃԻՇՏ Է

Յարգելի խմբագի՛ր,

Անասելի ցաւով մը կարդացի «ՎԷՄ»-ի մէջ զօր. Ղորղանեանի եւ պրոֆ. Աւալովի յօդուածները: Մէկի մէջ ցոյց տըրուած է, թէ ինչպէս մեծ պետութիւնները խաբած են մեզ, միւսին մէջ՝ թէ ինչպէս մեզ խաբած են մեր հարեւանները: Իմ համոզումով մեր թշնամի թիւրքերը աւելի բարձր են մեր այս «բարեկամներէն». թիւրքը գոնէ բաց նակատով կընէր ինչ որ ըրաւ: Թիւրքը մեզ կոտորեց – մենք գիտէինք, որ պիտի կոտորէր. թիւրքը երբեք ծածկած չէ իր թշնամութիւնը. իր խօսքը եւ գործը միշտ եղած են եւ այսօր ալ են ներդաշնակ: Հապա սա մեր բարեկամներն ու հարեւանները՞ը···: Ես կը զարմանամ մեր առաջնորդներուն. մէկ անգամ խաբուիլը ներելի է, բայց անվերջ խաբուի՞լ: Յետոյ, մի՞թէ սա պրոֆ. Աւալովի բոլոր գրածները նիշտ են. մի՞թէ իսկապէս վրացի մեծաւորները Բաթումի ու Թիֆլիսի մէջ այդպէս *նէմէրա* վարմունք ունեցան իրենց դարաւոր հարեւան հայերու հանդէպ: Եթէ այդ բոլորը նիշտ է, – վա՜յ մեզ. այդ հոգեբանութեամբ ոչ Հայաստանը կրնայ անկախ ըլլալ, ոչ Վրաստանը: Թէ՞ մի գուցէ ես կը սխալիմ: Այն ատեն կրնայի՞ք ինչ մը լուսաբանել:*)

Մարսէյլ. ՈՐԲ ՄԸ

*) «ՎԷՄ»-ի նպատակն արդէն այդ է. ճշուած փաստեր տալ եւ լուսաբանել: Ուշադրութեամբ հետեւելով «ՎԷՄ»-ի նիւթերուն, հետզհետէ կը ստացուի եւ գրուած հարցի պատասխանը: Ցամենայն դէպս հայ – վրացական յարաբերութիւններու մասին միայն Աւալովի գրածով պէտք չէ դատել: ԽՄԲ.